ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Բոլորեց վաստակաշատ գիտնական ու մանկավարժ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ Էմմա Աշոտի Կոստանդյանի ծննդյան 75 տարին: Է. Կոստանդյանն անցել է գիտական-ստեղծագործական երկար ու բազմաբովանդակ ուղի, որն իր հիմնական գծերով համընկնում է հայ պատմագիտության վերջին շուրջ կեսդարյա տարեգրությանը: Իր գիտական գործունեության ընթացքում նա եղել և այժմ էլ գտնվում է հայ ակադեմիական գիտության լավագույն օջախներից մեկի՝ Պատմության ինստիտուտի առաջատար գիտնականների շարքում:

Ծնվել է 1934 թ. հուլիսի 23-ին Կիրովականում (այժմ՝ Վանաձոր): 1941–1951 թթ. սովորել է տեղի №1 իգական միջնակարգ դպրոցում, որն ավարտել է ոսկե մեդալով: 1951 թ. նա ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը և 1956-ին գերազանցության դիպլոմով ավարտել այն: 1958 թ. աշխատանքի է անցել ԳԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնում որպես լաբորանտ, 1964 թ. ընդունվել է ինստիտուտի ասպիրանտուրան՝ նոր պատմության գծով: Է. Կոստանդյանի գիտական ղեկավարն է եղել ականավոր պատմաբան, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը: 1968 թվականից Է. Կոստանդյանն աշխատում է Պատմության ինստիտուտում՝ սկզբում որպես կրտսեր գիտաշխատող, 1978-ից՝ ավագ գիտաշխատող, իսկ 2003 թ. մինչ օրս Նոր պատմության բաժնի վարիչ:

Լայն են Է. Կոստանդյանի գիտական հետաքրքրության շրջանակները՝ Արևմտյան Հայաստանի XIX դ. երկրորդ կեսի մշակութային կյանք, հասարակաքաղաքական շարժումներ, արևմտահայ մամուլի առանձին օրգաններ, ազգային-ազատագրական գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ և այլն: Է. Կոստանդյանի տքնաջան աշխատանքի շնորհիվ արդեն 1970-ական թվականների սկզբներից մեր պատմաբաններն ու ընթերցող լայն հանրությունը սկսեցին իրենց համար բացահայտել XIX դ. Հայ Առաքելական եկեղեցու նշանավոր գործիչների կյանքի ու գործունեության անծանոթ դրվագները, հոգևորականներ, որոնք միաժամանակ ազգային գործիչներ ու գիտնականներ էին: Այդ դեմքերից առաջինը ականավոր լուսավորիչ, բանահավաք, գիտնական, մանկավարժ, ազգային-ազատագրական շարժման գործիչ Գարեգին Սրվանձտյանցն էր: 1971 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝

«Գարեգին Սրվանձտյանցի հասարակական-քաղաքական գործունեությունը» թեմայով, իսկ 1979 թ. Է. Կոստանդյանը տպագրել է հայ բանագիտության սկզբնավորող Գ. Սրվանձտյանցի լուսավորական, քաղաքական և հրապարակախոսական գործունեությանը նվիրված մենագրությունը: Հեղինակը բացահայտել է Սրվանձտյանցի ունեցած մեծ ներդրումը արևմտահայոց հոգևոր և կրթամշակութային կյանքում, նրա հասարակական-քաղաքական գործունեությունը, այդ թվում՝ կապերը հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների հետ: Կարևոր տեղ է հատկացված վաղ միջնադարյան Հայաստանի պատմության հիմնահարցերի վերաբերյալ Գարեգին Սրվանձտյանցի տեսակետների ու գնահատականների վերլուծությանը: Աղբյուրագիտական ու գիտաքաղաքական մեծ արժեք ունեն Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության վերաբերյալ Սրվանձտյանցի հուշագրական ու վիճակագրական արժեքավոր աշխատությունների գնահատականներն ու մեկնաբանությունները: Այս աշխատությունը վերահրատարակվել է 2008 թվականին:

Արևմտահայ ականավոր հոգևորականների կյանքի ու գործունեության, Հայկական հարցի ու ազգային-ազատագրական շարժման համակողմանի ուսումնասիրության ասպարեզում Է. Կոստանդյանի կատարած հաջորդ ծանրակշիռ քայլը 1999 թ. նրա պաշտպանած դոկտորական ատենախոսությունն էր՝ «Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը» թեմայով: Այն նվիրված էր XIX դ. երկրորդ կեսի – XX դ. սկզբների ականավոր գործիչ, Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հոգևոր, հասարակական-քաղաքական, գրական-իմաստասիրական գործունեությանը: Է. Կոստանդյանը արխիվային վավերագրերի, ժամանակի մամուլի, հուշագրությունների և գիտական գրականության հիման վրա լուսաբանել է Մկրտիչ Խրիմյանի կյանքի ու գործունեության շրջափուլերը, բացահայտել նրա տեղն ու դերը հայ հասարակական-քաղաքական մտքի, Հայկական հարցի արծարծման, ազգային-ազատագրական շարժումների մեջ: Խրիմյանի կյանքն ու գործունեությունը այնքան սերտորեն էին միահյուսվել XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբների հայոց պատմության առանցքային իրադարձություններին, որ այդ ամենի գիտական ուսումնասիրությունը հնարավոր չէր իրականացնել որպես առանձին հեղինակավոր հոգևորականի կամ քաղաքական գործչի կենսագրության պարզ շարադրանք, կամ էլ՝ քաղաքական հայացքների քննություն: Ուստի, Է. Կոստանդյանի աշխատությունը, փաստորեն, դարձել է տվյալ դարաշրջանի հայոց պատմության առանցքային իրադարձությունների ուսումնասիրությունը՝ դրանցում Մկրտիչ Խրիմյանի անմիջական մասնակցությունը բացահայտելու և արժևորելու դիտանկյունով: Մասնագիտական մոտեցումով, պատմական հարուստ սկզբնաղբյուրների հանգամանալից քննության առումով Է. Կոստանդյանի ուսումնասիրությունը, անկասկած, առաջինն ու միակն է մեր պատմագիտության մեջ, որը դեռ բազում սերնդների եզակի հնարավորություն կտա հասու լինելու հայ ժողովրդի սիրված գործիչներից մեկի՝ ականավոր հոգևորականի ու մեծ հայի կյանքին և գործունեությանը: Որպես առանձին մենագրություն այս ատենախոսությունը նույնպես լույս է տեսել երկու անգամ՝ 2000 և 2008 թթ.:

2003 թ. լույս տեսավ Է. Կոստանդյանի երրորդ մենագրությունը՝ «Կոստանդնուպոլսի «Արևելք» օրաթերթը» վերնագրով: Աշխատությունն առաջին փորձն է այս

պարբերականի պատմության ուսումնասիրության ասպարեզում: Հեղինակը մանրամասն վերլուծել է օրաթերթի տեղն ու դերը արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում, բացահայտել նրա ներդրումը հայ լրագրական մշակույթի և լրատվության ասպարեզում: Այս աշխատության տրամաբանական շարունակությունն է Է. Կոստանդյանի հաջորդ ուսումնասիրությունը՝ «Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ» (Երևան, 2005), որը նվիրված է նախ Կ. Պոլսում, ապա Արևմտյան Հայաստանում մշակութային ընկերությունների ստեղծման ու դպրոցական գործի կազմակերպման պատմությանը: Է. Կոստանդյանը կազմել ու հրատարակել է նաև «Արծուի Վասպուրական» ամսագրի մատենագիտությունը («Արծուի Վասպուրական» ամսագրի մատենագիտություն (1855-1856, 1858-1864 թթ.)», Երևան, 2006):

Տասնամյակների տքնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող այս աշխատություններից բացի, Է. Կոստանդյանը նաև հարյուրից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Դրանք լույս են տեսել հանրապետության և Սփյուռքի գիտական պարբերականներում: Նա որպես խմբագիր գործուն մասնակցություն է ունեցել մի շարք արժեքավոր մենագրությունների հրատարակման աշխատանքներին, գրախոսել է բազմաթիվ աշխատություններ, զեկուցումներով պարբերաբար հանդես եկել հանրապետական ու միջազգային գիտաժողովներում:

Է. Կոստանդյանն այժմ աշխատում է մեկ այլ ականավոր հոգևոր գործչի ու գիտնականի՝ Մաղաքիա Օրմանյանի հասարակական-քաղաքական և գիտական գործունեության ուսումնասիրության վրա: Մասնակցում է նաև «Հայ ժողովրդի պատմության» քառահատորի երրորդ հատորի խմբագրման աշխատանքներին:

Է. Կոստանդյանի հրապարակած աշխատությունների գիտական կարևոր արժեքը և, ընդհանրապես, նրա գիտական ողջ գործունեությունը լայն ճանաչման է արժանացել ինչպես հանրապետության գիտական, այնպես էլ Սփյուռքի լայն շրջաններում: Նա 2007 թ. Իրանի «Վան-Վասպուրական» հայրենակցական միության հրավերով XIX դ. ազգային-ազատագրական շարժումների մասին և Մկրտիչ Խրիմյանին նվիրված դասախոսությունների շարք է կարդացել Թեհրանի և Սպահանի հայ համայնքի համար, իսկ 2008 թ. Լոս Անջելեսում գիտական զեկուցում է կարդացել «Մկրտիչ Խրիմյանը և հայկական Երուսաղեմը» թեմայով:

Է. Կոստանդյանը գիտահետազոտական աշխատանքը զուգորդում է մանկավարժական ու գիտական կադրերի պատրաստման գործի հետ, իր հարուստ գիտելիքներն է հաղորդում ուսանողներին և ասպիրանտներին: 75 տարին բոլորած վաստակաշատ գիտնականն այսօր էլ երիտասարդական ավյունով շարունակում է ստեղծագործական որոնումները, ունի իր ծրագրերը: Բոլոր գործընկերների անունից ցանկանում ենք նրան քաջառողջություն ու ստեղծագործական նոր նվաճումներ:

ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ,
ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ